

**Պերճ Խաչատրյան**

*ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասիստենտ,  
իրավաբանական գիտությունների թեկնածու*

**ՇՐՋԱՊԱՏԻ ՀԱՄԱՐ ՎՏԱՆԳ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ  
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԵՊՔՈՒՄ ԱՆՁԻՆ ՀԱՐԿԱԴԻՐ  
ԲՈՒԺՄԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Անձի ազատության իրավունքի կարևորությունը ճանաչվել է դեռևս մարդկության պատմության վաղ ժամանակաշրջանից: Այն իր արտացոլումն է գտել այնպիսի փաստաթղթերում, ինչպիսիք են Ազատությունների մեծ խարտիան<sup>1</sup> (1215թ.), ԱՄՆ-ի 1987 թվականի սահմանադրությունը<sup>2</sup> և Ֆրանսիայի 1791 թվականի սահմանադրությունը<sup>3</sup>: Այս իրավունքի ճանաչման հիմնական նպատակն է եղել երաշխավորել անձի ֆիզիկական ազատությունը՝ պաշտպանելով նրան կամայական ձեռքակալություններից և ազատագրկումներից:

Անձի ազատության իրավունքն ամրագրված է միջազգային մի շարք իրավական ակտերով, ինչպիսիք են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը<sup>4</sup> (հոդված 9), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը<sup>5</sup> (հոդվածներ 8, 9), Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան՝ փոփոխված 11-րդ արձանագրությամբ<sup>6</sup> (հոդված 5) և այլն:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 9-րդ հոդվածում սահմանված է, որ ոչ ոք չպետք է ենթարկվի կամայական ձեռքակալման, կալանքի կամ արտաքսման: Հռչակագրում չեն սահմանվում մարդուն ազատությունից զրկելու հիմքերը, ինչպես նաև անդրադարձ չի կատար-

<sup>1</sup> Տե՛ս <http://lib.ru/INOOLD/ENGLAND/hartia.txt>

<sup>2</sup> Տե՛ս <http://www.constitutionfacts.com/content/constitution/files/USConstitution-Russian.pdf>

<sup>3</sup> Տե՛ս <http://www.hist.msu.ru/ER/EText/cnst1791.htm>

<sup>4</sup> Տե՛ս ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական տեղեկագիր, 20.12.2004թ., N 4 (12):

<sup>5</sup> Տե՛ս ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական տեղեկագիր, 20.12.2004թ., N 4 (12):

<sup>6</sup> Տե՛ս ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական տեղեկագիր, 20.12.2004թ., N 5 (13):

վում ազատության իրավունքի սահմանափակման ընթացակարգերին, այլ հիմնական շեշտադրումը կատարվում է կամայականության արգելքի վրա:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 8-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանված է, որ ոչ ոք չպետք է պահվի անազատ վիճակում: Իսկ կոնվենցիայի 9-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է. «Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոք չի կարող ենթարկվել կամայական ձերբակալման կամ կալանավորման: Ոչ ոք չպետք է գրկվի ազատությունից այլ կերպ, քան այնպիսի հիմքերով և այնպիսի ընթացակարգին համապատասխան, որոնք սահմանված են օրենքով»: Հոդվածի մյուս կետերով սահմանվում են քրեական մեղադրանքով ձերբակալված կամ կալանավորված անձանց հիմնական իրավունքները: Ինչպես կարելի է նկատել, կոնվենցիայի 9-րդ հոդվածի 1-ին կետը, որպես ինքնուրույն դրույթ, նախատեսում է, որ անձին ազատությունից գրկելու հիմքերն ու ընթացակարգերը պետք է սահմանվեն օրենքով:

Ի տարբերություն նշված երկու միջազգային ակտերի՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 5-րդ հոդվածն ավելի ծավալուն և մանրամասն դրույթներ է պարունակում անձի ազատության իրավունքի սահմանափակման հիմքերի վերաբերյալ:

Մասնավորապես, կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետով սպառնիչ կերպով սահմանվում են այն հիմքերը, երբ անձը կարող է օրենքով նախատեսված կարգով գրկվել ազատությունից: Նշված հիմքերի շարքում նախատեսված է նաև, որ անձը կարող է ազատությունից գրկվել վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով, ինչպես նաև հոգեկան հիվանդներին, զինեմուլներին, թմրամուլներին կամ թափառաշրջիկներին օրինական կալանքի վերցնելով:

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի նշված կետում օգտագործված են այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «վարակիչ հիվանդություններ տարածողները», «հոգեկան խանգարումներ ունեցողները», «թմրամուլները» և «թափառաշրջիկները»: Այս բոլոր անձանց միջև կապն այն է, որ նրանք բոլորն էլ կարող են ազատությունից գրկվել կամ հարկադիր բուժում ստանալու համար, կա՛մ սոցիալական քաղաքականությամբ թելադրված նկատառումներով, կա՛մ էլ և՛ բժշկական և՛ սոցիալական հիմքերով: Այդ իսկ պատճառով այս համատեքստում օրինական է եզրա-

կացնել, որ գերակշռող պատճառը, ըստ որի Կոնվենցիան թույլատրում է ազատությունից զրկել 5-րդ հոդվածի 1-ին կետի «ե» ենթակետում նշված անձանց, ոչ միայն այն է, որ նրանք վտանգավոր են հասարակական անվտանգության համար, այլ նաև այն, որ իրենց իսկ շահերից ելնելով, կարող է անհրաժեշտ լինել այդ անձանց մեկուսացումը:

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ օրենքով կարող է նախատեսվել ազատությունից զրկում՝ վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով կամ հոգեկան հիվանդ, գինեմոլ, թմրամոլ կամ թափառաշրջիկ անձանցից բխող հասարակական վտանգը կանխելու նպատակով: Այսինքն՝ ՀՀ Սահմանադրությունը հնարավոր է համարել նաև անձի ազատության սահմանափակումը այն դեպքերում, երբ անհրաժեշտություն է առաջանում միջոցներ ձեռնարկել վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու ուղղությամբ, որը կարող է զուգորդվել անձի նկատմամբ հարկադիր բուժական միջոցներ կիրառելով:

Մինևույն ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ անձին ազատությունից զրկելը վարակիչ հիվանդության տարածումը կանխելու ծայրահեղ միջոց է և կարող է կիրառվել բացառապես այն դեպքերում, երբ այլ եղանակով հնարավոր չէ հասնել հիվանդության տարածումը կանխելուն, որը լուրջ վտանգ է ներկայացնում հանրության առողջության համար<sup>1</sup>:

ՀՀ Սահմանադրության նշված նորմը, ելնելով հանրության առողջության և անվտանգության ապահովման անհրաժեշտությունից, միանգամայն արդարացի կարգավորում է նախատեսում այն դեպքերի համար, երբ կա վարակիչ հիվանդությունների տարածման իրական վտանգ: Սակայն կարևորվում է այն հանգամանքը, որ միայն վարակիչ հիվանդությունների առկայությունը չի կարող բավարար հիմք լինել անձի ազատության սահմանափակման համար. անհրաժեշտ է որ առկա լինի նաև դրա տարածման վտանգը, ինչպես նաև բացակայի այդ վտանգը կանխելու հնարավորությունը (սահմանված կարգով բժշկական միջամտություն և այլն):

---

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, **Գ. Հարությունյանի** և **Ա. Վաղարշյանի** խմբ., Եր., «Իրավունք» հրատ. 2010, էջ 193:

ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրենքով սահմանված եղանակներով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք:

Առողջության իրավունքը սուբյեկտիվ իրավունք է, հետևաբար, այն ենթադրում է որոշակի պարտականությունների իրականացում պետության կողմից: Անհրաժեշտ է, սակայն, նկատի ունենալ, որ այս իրավունքը չի կարող ընկալվել բացարձակ իմաստով<sup>1</sup>, քանի որ որոշակի պայմանների առկայության դեպքում նշված իրավունքի իրականացումը անձի համար կարող է համարվել պարտադիր՝ հանրային շահերից ելնելով: Եվ այս պարագայում ազգային օրենսդրությունը խնդիր ունի առավելագույնս երաշխավորելու անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հնարավորությունները:

Հայաստանի Հանրապետությունում բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման, իրավական, տնտեսական և ֆինանսական հիմունքները սահմանվում են «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով:<sup>2</sup> Նշված օրենքով ամրագրված են բժշկական օգնության և սպասարկման իրականացման սկզբունքները, բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս մարդու իրավունքները և պարտականությունները և այլն:

Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված է, որ բժշկական օգնության դիմելիս, ինչպես նաև բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս յուրաքանչյուր ոք իրավունք ունի իրագեկ լինել իր հիվանդության մասին և համաձայնություն տալ բժշկական միջամտության համար: Միևնույն ժամանակ նույն օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված է, որ մարդու համաձայնությունը բժշկական միջամտության համար անհրաժեշտ պայման է՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Այսինքն՝ օրենքը պարտադիր է համարել անձի համաձայնությունը՝ իր նկատմամբ բժշկական միջամտություն իրականացնելու համար՝ չբացառելով այն իրավիճակները, երբ նման միջամտությունն իրականացվի առանց հաշվի առնելու անձի կարծիքը:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ առանց մարդու կամ նրա օրինական

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, **Գ. Հարությունյանի** և **Ա. Վաղարշյանի** խմբ., Եր., «Իրավունք» հրատ. 2010, էջ 455:

<sup>2</sup> ՀՀ ԱԺՏ 1996/7-8

ներկայացուցչի համաձայնության թույլատրվում է իրականացնել բժշկական օգնություն և սպասարկում մարդու կյանքին սպառնացող վտանգի, ինչպես նաև շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների դեպքերում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Փաստորեն, օրենքը սպառիչ կերպով նախատեսում է առանց մարդու համաձայնության բժշկական օգնության և սպասարկման երկու դեպք:

1. երբ առկա է մարդու կյանքին սպառնացող վտանգ.

2. շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների դեպքում:

Ըստ էության, նշված դեպքերի առկայությունը անհրաժեշտ նախապայման կարող է հանդիսանալ անձի նկատմամբ բժշկական միջամտություն իրականացնելու համար, սակայն, հարկ է նկատել, որ դրանք չեն կարող բավարար համարվել, քանի որ տվյալ դեպքերում անհրաժեշտ է, որ հստակ դրսևորված լինի բժշկական միջամտությունից հրաժարվելու վերաբերյալ անձի կամքը: Այսինքն՝ առանց մարդու համաձայնության բժշկական միջամտություն իրականացնելու նախապայման է հանդիսանում անձի հրաժարման և նշված դեպքերի որևէ մեկի միաժամանակյա առկայությունը:

Նկատի ունենալով, որ օրենսդրությամբ արդեն իսկ նախատեսվել են առանց մարդու համաձայնության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու հնարավորությունը, անհրաժեշտ է քննարկել այն ընթացակարգերը, որոնք պետք է կիրառվեն նշված գործընթացում:

Առանց անձի համաձայնության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու դեպքերի առավել վիճահարույց է վարակիչ հիվանդություններով տառապող անձանց նկատմամբ բժշկական միջամտության իրականացումը, երբ վերջիններս հրաժարվում են դրանից: ՀՀ գործող օրենսդրությամբ, ճիշտ է, նախատեսված է այդպիսի անձանց հարկադիր բուժման հիմքը, սակայն նախատեսված չէ որևէ ընթացակարգային նորմ, թե ինչպես պետք է իրականացվի այդ բուժումը, որ մարմինն է իրավասու մնան որոշում կայացնելու, ինչ ընթացակարգով պետք կայացվի այդ որոշումը և այլն:

Նման պայմաններում առավել ընդունելի է անձի իրավունքների սահմանափակումը դատարանի որոշմամբ, որի դեպքում հնարավոր կլինի առավելագույնս արդյունավետ կերպով ապահովել մարդու իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Այս պայմաններում առաջնային նշանակություն են ձեռք բերում գործի հանգամանքները, ո-

րոնք էլ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է գնահատվեն դատարանի կողմից: Նմանատիպ մոտեցումը ևս համապատասխանում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից արտահայտված դիրքորոշմանը. «Վիտոլդ Լիտուան ընդդեմ Լեհաստանի» գործով 2000թ. ապրիլի 4-ի վճիռ (գանգատ թիվ 26629/95):

Նշված դեպքում խնդիրն արդեն իսկ տեղափոխվում է այլ հարթություն, երբ պետք է մշակվեն որոշակի առանձնահատուկ դատավարական մեխանիզմներ և երաշխիքներ, որոնք հնարավորություն կտան ապահովելու անձի իրավունքները և օրինական շահերը:

Դատավարական նորմերով կարգավորման ենթակա հարցերի շրջանակի մեջ են մտնում այնպիսի հարցեր, ինչպիսիք են անձին բժշկական հարկադիր հետազոտության և (կամ) բուժման ենթարկելու վերաբերյալ դատարան դիմելու դեպքերի շրջանակը, որի դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել, որ քաղաքացին պետք է վարակված լինի շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների ցանկում ներառված հիվանդությամբ, կամ լինեն հիմնավոր կասկածներ նշված հիվանդություններից որևէ մեկով անձի վարակվածության վերաբերյալ:

Հստակ կարգավորման ենթակա հարցերից է քննարկվող դեպքերում դատարան դիմելու իրավունք ունեցող անձանց շրջանակի որոշումը: Այս հարցի կարգավորումը սահմանելիս հարկ է նկատի ունենալ, որ այդ իրավունքով կարող են օժտվել միայն այն անձինք, ում անմիջական վտանգ է սպառնում, առողջապահության բնագավառում պետական լիազոր մարմինը, որը պատասխանատու է հանրային առողջության ապահովման համար, և անձի վարակվածության վերաբերյալ հստակ տվյալներ ունեցող բժշկական կազմակերպությունը:

Անդրադառնալով դատարան ներկայացվող դիմումին ներկայացվող պահանջներին՝ խնդրահարույց են հետևյալ հարցերը՝ ի՞նչ ապացույցներով պետք է հիմնավորված լինի դիմումը, արդյո՞ք անհրաժեշտ է կցված ապացույցներով հիմնավորել անձի վարակվածության հանգամանքը, նշված պարտականությունը դատարան դիմող ո՞ր սուբյեկտների համար է պարտադիր:

Հարկ է նկատել, որ քաղաքացուն բժշկական հարկադիր հետազոտության և (կամ) բուժման ենթարկելու վերաբերյալ դիմումը դատարանի կողմից պետք է քննվի սեղմ ժամկետում, իսկ գրավոր ապացույցներով հիմնավորված լինելու դեպքում՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 19-րդ գլխում սահմանված արագացված դատաքննության

կարգով: Հարկադիր բուժման ենթարկվող անձի իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանության տեսանկյունից հատուկ կարևորություն է ներկայացնում դատական քննությանը անձի մասնակցության իրավունքի ապահովումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ առողջական վիճակից ելնելով՝ անձը կարող է ի վիճակի չլինել մասնակցելու գործի քննությանը, կամ վերջինիս մասնակցությունը դատական միտին կարող է վտանգ սպառնալ դատարանի կազմի և գործի քննությանը մասնակցող անձանց առողջությանը:

Քաղաքացուն բժշկական հարկադիր հետազոտության և (կամ) բուժման ենթարկելու վերաբերյալ դիմումի քննության արդյունքներով դատարանը կայացնում է վճիռ, որով մերժում կամ բավարարում է դիմումը: Դիմումը բավարարելու մասին դատարանի վճիռը պետք է հիմք հանդիսանա քաղաքացուն բժշկական հաստատությունում հարկադիր հետազոտության և (կամ) բուժման ենթարկելու համար, որում պետք է նշվեն նաև բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատության անվանումը, անձին բժշկական հարկադիր հետազոտության և (կամ) բուժման ենթարկելու ժամկետը:

Ռուսաստանի Դաշնությունում անձին հարկադիր հետազոտության և (կամ) բուժման ենթարկելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են 1993 թվականի հուլիսի 22-ին ընդունված «Քաղաքացիների առողջության պահպանման մասին» ՌԴ օրենսդրության հիմունքներով<sup>1</sup>, որի 34-րդ հոդվածով սահմանված է, որ շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդություններով վարակված լինելը կարող է հիմք հանդիսանալ անձին ինչպես բժշկական հարկադիր հետազոտության, այնպես էլ հիվանդանոցային պայմաններում (ստացիոնար) բուժման համար: Նշված հոդվածի 2-րդ պարբերությամբ սահմանված է. «Առանց անձի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության անձին բժշկական քննության կամ հետազոտության ենթարկելու մասին որոշումը կայացվում է բժշկի (կոնսիլիում) կողմից, իսկ առանց անձի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության անձին հոսպիտալացնելու մասին որոշումը կայացվում է դատարանի կողմից»:

Ինչ վերաբերում է հարկադիր բուժումը վերացնելուն, ապա դրա համար հիմք կարող է հանդիսանալ միայն անձի ապաքինվելը կամ դատարանի համապատասխան որոշումը:

---

<sup>1</sup> [http://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_117098/](http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_117098/)

Հարկ է նշել նաև, որ ՌԳ քաղաքացիական դատավարության օրենսգրքով առանձին կանոնակարգման ենթարկված չեն անձին հարկադիր բուժման ենթարկելու վերաբերյալ գործերի դատավարական ընթացակարգերը:

Ուկրաինայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի<sup>1</sup> 4-րդ բաժնի 11-րդ գլուխն անվանված է. «Հակատուբերկուլյոզային հաստատություն պարտադիր հոսպիտալացման վերաբերյալ գործերի քննությունը»: Նշված գլխի ներքո ընդգրկված հոդվածներով կարգավորվում են գործերի ընդդատության, դիմումի բովանդակության և դրա ներկայացման ժամկետի, գործի քննության և դատարանի որոշման հետ կապված դատավարական հարաբերությունները: Որպես առանձնահատկություն կարելի է նշել, որ օրենսգրքի 285 հոդվածի համաձայն՝ նշված գործերով դատարան դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտների շրջանակը բավականին նեղացված է: Մասնավորապես, նշված հոդվածի համաձայն՝ դատարան դիմելու իրավունք ունի համապատասխան հակատուբերկուլյոզային հաստատությունը:

Միաժամանակ անհրաժեշտ է նկատել, որ օրենսգրքի 284-րդ հոդվածով նախատեսված է, որ դիմումին կցվում է համապատասխան բժշկական եզրակացությունը: Տվյալ պարագայում մման մոտեցումն արդարացված է, քանի որ, օրենսգրքով դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտը հանդիսանում է մասնագիտացված բժշկական կազմակերպությունը, որի տրամադրության տակ կարող են գտնվել համապատասխան ապացույցներ:

Գիմումի քննության համար նախատեսված է եռօրյա ժամկետ՝ գործի հարուցման օրվանից:

Ինչ վերաբերում է հարկադիր բուժման վերաբերյալ դատական ակտի վերացման հնարավորությանը, ապա Ուկրաինայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 4-րդ բաժնի 11-րդ գլխում որևէ առանձնահատկություն սահմանված չէ:

Բելառուսի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքը<sup>2</sup> պարունակում է առանձին բաժին՝ «Հարկադիր հոսպիտալացման և բուժման վերաբերյալ գործերի քննության առանձնահատկությունները» վերնագրով, որտեղ ընդգրկված հոդվածներով կարգավոր-

<sup>1</sup> <http://kievgrad.info/page/1/269>

<sup>2</sup> <http://pravo.kulichki.com/vip/gpk/index.htm>



վում են դատարան դիմելու, գործի քննության և դատարանի որոշման հետ կապված դատավարական հարաբերությունները:

Որպես առաձնահատկություն կարելի է նշել այն, որ, ինչպես Ուկրաինայի օրենսգրքում, այստեղ նույնպես նեղացված է դատարան դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտների շրջանակը: Մասնավորապես, օրենսգրքի 391-րդ հոդվածի համաձայն՝ դատարան դիմելու իրավունք ունեն միայն համապատասխան բժշկական հաստատությունները՝ որպես պարտադիր պայման սահմանելով բժշկական եզրակացություն ներկայացնելը: Իսկ դիմումի քննության համար նախատեսված է հնգօրյա ժամկետ՝ սկսած դիմումի՝ դատարան ստացվելու օրվանից:

Հարկադիր բուժման վերաբերյալ դատական ակտի վերացման վերաբերյալ նշված պարագրաֆում որևէ առանձնահատկություն սահմանված չէ:

Կարևորվում է նաև այն հանգամանքը, որ ո՛չ Ուկրաինայի և ո՛չ էլ Բելառուսի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքերով լրացուցիչ դատավարական երաշխիքներ սահմանված չեն այն դեպքերի համար, երբ անձը առողջական վիճակի պատճառով չի կարող ներկա գտնվել գործի քննությանը:

**Perch Khachatryan**

*Chair of Civil Procedure, YSU*

*Candidate of Legal Sciences*

## **GROUNDS FOR COMPULSORY MEDICAL TREATMENT OF DISEASES, WHICH POSE DANGER FOR WIDER PUBLIC AND JUDICIAL PROBLEMS**

The article is dedicated to the grounds for compulsory medical treatment of diseases, which pose danger for the public, to the peculiarities of limiting the freedom of a person and to the analysis of the process. The article analyses in details the provisions of article 16 of RA Constitution, concepts defined in article 5 of the European Convention on Human Rights and Fundamental Freedoms, order and conditions of limiting personal freedom in concrete discussed cases, legal position and practice of the European Court of Human Rights concerning these cases. At the same time the experience of other countries has also been represented through doing practical suggestions to RA inner-state legislation to amend and fill the lacks.